# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 30 » հոկտեմբերի 2022 թվականի N: 571-Ա ք.Գյումրի

**«ԳՅՈՒՄՐՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՍՏՂԻԿ ԲԵՅԲՈՒՏՅԱՆԻ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայ օգնության միության «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 6-ին տրված LL N 176229 անաշխատունակության թերթիկը, Աստղիկ Բեյբուտյանի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի դիմումը և հաշվի առնելով ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 22-ի N 394-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող Աստղիկ Բեյբուտյանի հղիության և ծննդաբերության արձակուրդը երկարաձգել 2022 թվականի դեկտեմբերի 7-ից 21-ը ներառյալ:

2. Աստղիկ Բեյբուտյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող նշանակել նույն ընկերության ընտանեկան բժիշկ Անահիտ Բարխուդարյանին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է